ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

"06" 08 2020թ. N ԿՀ/29.2/22380-2020

«Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների
պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ-ի
գործադիր տնօրեն
Լ.Ներսիսյանին

Երևան, 0009, Սարմենի փողոց 1
sakhfd@arminco.com

Հարգելի պարոն Ներսիսյան

Ի պատասխան ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարին ուղղված Ձեր 2020 թվականի փետրվարի 19-ի թիվ Ե-2674 գրության հայտնում ենք, որ 2020 թվականի ապրիլի 20-ին Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում կազմակերպվել է հանդիպում ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի և Ձեր կենտրոնի ներկայացուցիչների մասնակցությամբ: Հանդիպման ընթացքում քննարկվել են Ձեր կողմից ներկայացված գրությամբ բարձրացված հարցերը, մասնավորապես՝ ««Արմենիա» Միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի կողմից վերոհիշյալ գրության վերաբերյալ ներկայացված պատասխանը: Քննարկվել են նաև Ձեր գրությամբ բարձրացված հարցերի հետագա զարգացման հնարավոր լուծումները: Հանդիպման ընթացքում ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի ներկայացուցիչը հայտնեց, որ իրենց կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքները կհրապարակվեն հանձնաժողովի պաշտոնական կայքում: Ամփոփելով հանդիպման արդյունքները մասնակիցները պայմանավորվեցին միմյանց տրամադրել բարձրացված հարցի վերաբերյալ ի հայտ եկած լրացուցիչ նոր տեղեկությունները:

Ինչպես տեղեկացանք Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովից (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ 2020 թվականի ապրիլի 21-ի ««Արմենիա միջազգային օդանավակայաններ» փակ բաժնետիրական

ընկերության կողմից «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի հնարավոր խախտումների վերաբերյալ վարչական վարույթ հարուցելու մասին» թիվ 132-Ա որոշմամբ հարուցել է վարչական վարույթ, որի շրջանակներում Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են «Զվարթնոց» օդանավակայանի տարածքում մատուցվող մի շարք ծառայություններ, այդ թվում նաև ավտոկայանատեղի սակագների վերաբերյալ հարցը: Հանձնաժողովը 2020 թվականի հուլիսի 20-ին ընդունել է ««Արմենիա» միջազգային օդանավակայաններ» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ» թիվ 288-Ա որոշումը, որով ամփոփել է Վարչական վարույթի շրջանակներում իրականացված ուսումնասիրության արդյունքները:

Թիվ 288-Ա որոշմամբ «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» փակ բաժնետիրական ընկերության գործողությունները՝ մասնավորապես «Զվարթնոց» օդանավակայանի տարածքում վճարովի ավտոկայանատեղիի մատուցման ծառայության գնի չհիմնավորված բարձրացումը որակվել է որպես մենաշնորհ դիրքի չարաշահում՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի խախտում:

Օրենքի խախտման համար «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց և հանձնարարվել շտկել խախտումը՝ 1-ամսյա ժամկետում ապահովելով ավտոկայանատեղիի սակագների վերանայումը:

Հայտնում եմ նաև, որ Թիվ 288-Ա որոշումը հրապարակված է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում (http://www.competition.am/index.php?menu=149&lng=1):

Հարգանքով՝

Ա. Սիմոնյան

06.08.2020

X

VERIFIED OCSP 06.08.2020 12:33:49 GMT+4

Signed by: SIMONYAN ARMEN 4003890647

Կատարող՝ Վ.Չիլինգարյան
Երկաթուղային, ջրային և օդային տրանսպորտի
քաղաքականության վարչություն հեռ. 011 52 88 31